Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2024 թվականի
հունիսի 24-ի թիվ ԿԽ-007/24 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2024թ. պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև՝ դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի 17.06.2024 թվականի թիվ 01/11165-24 գրությունը:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ դատախազի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը՝ հետևյալ ոլորտներում.

ա) Ընդհանուր մասնագիտական ոլորտ.

Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է դատախազների արտաքին հաղորդակցության հմտությունների, ՀՀ Սահմանադրության և սահմանադրական արդարադատության արդի հարցերի, դատախազի վարքագծի կանոնների և իրավավերլուծական փաստաթղթերի կազմման և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը:

բ) Հատուկ մասնագիտական ոլորտ.

Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քաղաքացիական իրավունքի արդի հարցերի, քաղաքացիական և վարչական դատավարությունների տարբեր փուլերում ծագող հիմնախնդիրների, մունիցիպալ իրավունքի և հողային օրենսդրության, դրանց վերաբերյալ ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում և ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

5. Լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա՝ դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների, ինչպես նաև՝ ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող կրթական արդի եղանակների կիրառման միջոցով:

6. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ Ծրագրով նախատեսված ուղղությունների: Փորձաշրջանի մեկ օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 1000 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին Ունկնդիրը գնահատվում է դրական կամ բացասական:

7. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 1204 ակադեմիական ժամ:

8. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 7 ամիս և յոթ օր (2024թ. հուլիսի 01-ից 2025թ. փետրվարի 7-ը)՝ ներառյալ 5 ամիս տևողությամբ փորձաշրջանը (2024թ. սեպտեմբերի 09-ից 2025թ. փետրվարի 7-ը):

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Տևողությունը	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի ժամաքանակ	Ընդհանուր ժամաքանակ
Ուսուցման 1-ին հատված (հուլիսի 1–ից օգոստոսի 30)	**200 ժամ** (10 դասընթաց) (հուլիսի 1–ից օգոստոսի 30)	**2 ժամ** (1 քննություն) (սեպտեմբերի 3-ից սեպտեմբերի 6)	**—**	**202 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (սեպտեմբերի 9–ից փետրվարի 7)		**2 ժամ** (1 քննություն) (նոյեմբերի 11-ից նոյեմբերի 15)	**1000 ժամ** (սեպտեմբերի 9-ից փետրվարի 7)	**1002 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**200 ժամ**	**4 ժամ**	**1000 ժամ**	**1204 ժամ**

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	PC-G-001-24	Դատախազների արտաքին հաղորդակցության հմտություններ	4
2.	PC-G-002-24	ՀՀ Սահմանադրության և սահմանադրական արդարադատության արդի հարցեր	6
3.	PC-G-003-24	Դատախազի վարքագծի կանոններ	6
4.	PC-G-004-24	Իրավավերլուծական փաստաթղթերի կազմում և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքներ	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**20**

2. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
5.	PC-CR-001-24	Քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	50
6.	PC-CR-002-24	Քաղաքացիական դատավարության արդի հարցեր	50
7.	PC-CR-003-24	Վարչական դատավարության արդի հարցեր	40
8.	PC-CR-004-24	Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր	20
9.	PC-CR-005-24	Հողային իրավունք	10
10.	PC-CR-006-24	Մունիցիպալ իրավունք	10
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**180**

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. PC-G-001-24. Դատախազի արտաքին հաղորդակցության հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրներին իրենց պաշտոնեական գործառույթների արդյունավետ իրականացման կարևոր գրավական հանդիսացող հաղորդակցությունների վերաբերյալ բազային գիտելիքների ձեռքբերման համար: Նշվածը թույլ կտա ձևավորել կառուցողական փոխհարաբերություններ և կանխել հնարավոր ռիսկերը պաշտոնեական և ոչ պաշտոնեական գործունեության ընթացքում:

Դասընթացը ներառում է՝

- լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ արդյունավետ շփման հմտությունները (բանավոր/հանրային խոսքի կատարելագործում, ոչ վերբալ հաղորդակցման կարողությունների զարգացում, լսելու, ասելիքը հստակ, մատչելի լեզվով փոխանցելու հմտության ձևավորում),
- կոնֆլիկտի կառավարման կարողությունը,
- բանակցային հմտությունները
- դատախազի կողմից խոսքի ազատության իրավունքի իրացման առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-G-002-24, PC-G-003-24, PC-G-004-24 դասընթացների հետ համատեղ:

2. PC-G-002-24. ՀՀ Սահմանադրության և սահմանադրական արդարադատության արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է սահմանադրական արդարադատության ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների, դրանց սահմանափակումների վերաբերյալ հարցերը,
- դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման ու գործունեության կարգի) վերաբերյալ հարցերը,
- դատախազության սահմանադրական կարգավիճակի վերաբերյալ հարցերը,
- սահմանադրական արդարադատության (սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, կազմակերպման և գործունեության կարգի, Սահմանադրական դատարանի լիազորությունների) վերաբերյալ հարցերը,
- ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների կատարման արդի հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-G-001-24, PC-G-003-24, PC-G-004-24 դասընթացների հետ համատեղ:

3. PC-G-003-24. Դատախազի վարքագծի կանոններ

Դասընթացը պայմանավորված է դատախազի վարքագծի կանոնների հետ կապված գիտելիքներ հաղորդելու և դրանք կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատախազական գործունեություն իրականացնելիս և ոչ դատախազական գործունեության ընթացքում դատախազի վարքագծի կանոնների, դատախազների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-G-001-24, PC-G-002-24, PC-G-004-24 դասընթացների հետ համատեղ:

4. PC-G-004-24. Իրավավերլուծական փաստաթղթերի կազմում և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքներ

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության հետ կապված գործնական հարցերը,
- օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման հետ կապված գործնական հարցերը,
- պաշտոնական գրագրության, այդ թվում՝ էլեկտրոնային գրագրության իրականացման առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-G-001-24, PC-G-002-24, PC-G-003-24 դասընթացների հետ համատեղ:

5. PC-CR-001-24. Քաղաքացիական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է օրենսդրական զարգացման արդյունքում քաղաքացիաիրավական ոլորտում ներդրված ինստիտուտների, փոփոխության ենթարկված դրույթների, դրանց կիրառման վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումների, քաղաքացիական իրավունքի այլ նորմերի կիրառման առանձնահատկությունների, դրա արդյունքում բացահայտված խնդրահարույց և վիճելի հարցերի վերաբերյալ տեսական ու պրակտիկ գիտելիքների ու հմտությունների փոխանցման, ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների ներկայացման, ինչպես նաև ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքներ, մասնավորապես՝
  - սեփականության իրավունքի ծագման, փոփոխման և դադարման առանձնահատկությունները,

- գործարքները,
- ժառանգական իրավունքը, մասնավորապես՝
  - ժառանգության ընդունման ու հրաժարման առանձնահատկությունները,
- պարտավորական իրավունքի արդի հարցերը, մասնավորապես՝
  - վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունները,
  - ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները,
- միջազգային մասնավոր իրավունքի արդի հարցերը, մասնավորապես՝
  - կոլիզիոն նորմերի կիրառման առանձնահատկությունները,
  - պայմանագրային հարաբերությունների միջազգային մասնավոր-իրավական կարգավորման առանձնահատկությունները,
- արժեթղթերի իրավական կարգավորման առանձնահատկությունները,
- սնանկության իրավունքի արդի հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով PC-CR-002-24 դասընթացի հետ համատեղ :

6. PC-CR-002-24. Քաղաքացիական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներդրված նոր ինստիտուտները և իրավակարգավորումները ներկայացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ապացուցման հիմնահարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- դատավարական ժամկետները,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման առանձնահատկությունները,
- հակընդդեմ հայցը և դրա չներկայացման դատավարական հետևանքները,
- կատարողական վարույթի առանձնահատկությունը քաղաքացիական դատավարությունում,
- նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով PC-CR-001-24 դասընթացի հետ համատեղ:

7. PC-CR-003-24. Վարչական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝ վարչարարության, վարչական վարույթի, ապացուցման հիմնահարցերը, դատաքննության հիմնահարցերը, դատավարական ժամկետները, հայցի ապահովման հիմնահարցերը, նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բողոքարկման առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով PC-CR-004-24, PC-CR-005-24, PC-CR-006-24 դասընթացների հետ համատեղ :

8. PC-CR-004-24. Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է պետական շահերի պաշտպանության հարցերով քաղաքացիական և վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է՝

- պարտավորական իրավահարաբերությունները ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների համատեքստում,
- հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկման իրավական կարգավորումներն ու հիմնախնդիրները,
- վարչարարության, վարչական վարույթի, վարչական և քաղաքացիական դատավարությունների հարաբերակցության հիմնահարցերը,
- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրարկմանն առնչվող հիմնահարցերը,
- քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի մասնակցության հիմքերը,
- պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող հիմնահարցեր
- պետական տուրքի և դատական ծախսերի հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- ՀՀ դատախազության կոլեգիայի վերաբերելի որոշումները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով PC-CR-003-24, PC-CR-005-24, PC-CR-006-24 դասընթացների հետ համատեղ:

9. PC-CR-005-24. Հողային իրավունք

Դասընթացն անհրաժեշտ է հողային օրենսդրության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- հողային իրավունքի արդի հարցերը,
- հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը,
- պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սեփականության իրավունքով տրամադրելը,
- հողօգտագործման իրավունքը,
- հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով PC-CR-003-24, PC-CR-004-24, PC-CR-006-24 դասընթացների հետ համատեղ:

10. PC-CR-006-24. Մունիցիպալ իրավունք

Դասընթացն անհրաժեշտ է հանրային իշխանության ճյուղերից մեկի՝ տեղական ինքնակառավարման, պետական կառավարման և տարածքային կառավարման հետ տեղական ինքնակառավարման կապի առանձնահատկությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- մունիցիպալ իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան,
- մունիցիպալ իրավունքի համակարգը, խնդիրները, սկզբունքները,
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հասկացությունները,
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները,
- իրավական և մասնագիտական հսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ,
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները հողօգտագործման բնագավառում
- Երևան քաղաքի նախկին և ներկայիս կարգավիճակը ու դրանով պայմանավորված իրավահաջորդության խնդիրները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով PC-CR-003-24, PC-CR-004-24, PC-CR-005-24 դասընթացների հետ համատեղ: